Արձանագրություն 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.07.2019թ. ժամը 17:00-ին:
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Աղաջանյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Հ. Ջաղինյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Մ. Սահակյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության առաջատար մասնագետ

Գ. Մեհրաբյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության առաջատար մասնագետ

Գնումները համակարգող

Լ. Սահակյան՝ ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

Բացակայում է

Ի. Քոչարյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության առաջատար մասնագետ

1. <u>Տեղեկություններ ՀՀ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ</u>

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դրական եզրակացության համաձայն «Մաստեր սթայլ» ՍՊԸ կողմից ներկայացված տվյալները համապատասխանել են իրականությանը:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց «Մաստեր սթայլ» ՍՊԸ կողմից 3 աշխատանքային օրվա ընթացում (հուլիսի 16-ից մինչև հուլիսի 18-ը ժամը 18.00-ն) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և արձանագրեց. որ

1) Բացակայում են հրավերով նախատեսված Հավելված 3 և Հավելված 3.1-ը:

2) Վահան Պապիկյանի աշխատանքային գրքույկը և ինքնակենսագրությունը ընթեռնելի չէ հետևաբար չենք կարող գնահատել պետական կառավարման համակարգում հանրային ֆինանսների բնագավառին վերաբերող ոլորտներում վերջին հինգ տարում առնվազն 3 տարվա նրա աշխատանքային փորձը:

3) Կարեն Բաբախանյանի դասավանդման փորձառությունը հիմնավորող փաստաթղթերում նշված չէ թե նա վերապատրաստումը իրականացրել է թղթային թե էլեկտրոնային տարբերակով, նշված փաստաթղթերով առկա չէ հիմք այն մասին, որ իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերում ներգրավված անձանց վերապատրաստում:

4) Արթուր Ավետիսյանի դասավանդման փորձառությունը հիմնավորող փաստաթղթերով ծառայությունը հստակ նկարագրված չէ, առկա չէ հիմք այն մասին, որ

իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերում ներգրավված անձանց համար վերապատրաստում: Առկա չէ նաև հիմք, որ նա վերջին երկու տարիների ընթացքում «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերում ներգրավված անձանց համար գնումների համակարգի օգտագործման վերաբերյալ վերապատրաստման առնվազն 3 դասընթացների վարման փորձառություն ունի և որ վերապատրաստել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերում ներգրավված անձանց («Գնումների մասին» ՀՀ օրենքով գնումների գործակալներ չկան):

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «Մաստեր սթայլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:
2. Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել փաստաթղթերի ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Աղաջանյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ. Ջաղինյան**

_____ **Մ. Սահակյան**

_____ **Գ. Մեհրաբյան**

Գնումները համակարգող՝ _____ **Լ. Սահակյան**